

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 01

ՀՀ Լոռու մարզում Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող հանձնաժողովի նիստի

09.02.2015թ.

ք.

Վանաձոր

Նիստին մասնակցում են հանձնաժողովի անդամներ՝
Ա.Նալբանդյան - հանձնաժողովի նախագահ, ՀՀ Լոռու մարզպետ

Հանձնաժողովի անդամներ.

Գուգարաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Սեպուհ Արքեպիսկոպոս Չուլջյան

Ա.Դարբինյան - ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ

Վ.Ասատրյան - ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ

Տ.Բադոյան - ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ, «Լոռու Երիտասարդ Սերունդ»

ՀԿ-ի նախագահ

Ա.Մանուկյան - ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ղեկավար

Մ.Սայադյան- ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ

Դ.Մանուչարյան - ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ

Ս.Խալաթյան - ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ

Ս.Դարբինյան - Վանաձորի քաղաքապետ

Ա.Վարոսյան - Ալավերդու քաղաքապետ

Գ.Սահակյան - Սպիտակի քաղաքապետ

Մ.Ղարաբեշիշյան - Ստեփանավանի քաղաքապետ

Է.Արշակյան - Տաշիրի քաղաքապետ

Գ.Խաչատրյան- Վանաձորի պետական համալսարանի ռեկտոր /համաձայնությամբ/

Ա.Խառատյան - «Հայաստանի Ազգային Պոլիտեխնիկական համալսարան»
հիմնադրամի Վանաձորի մասնաճյուղի տնօրեն
/համաձայնությամբ/

Ֆ.Մովսիսյան - Վանաձորի պետական համալսարանի պատմության ամբիոնի
վարիչ /համաձայնությամբ/

Յու.Ղուլյան - Վանաձորի պետական համալսարանի դասախոս
/համաձայնությամբ/

Կ.Աթոյան - «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Պարլո Տիչինայի անվան թիվ 20
հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն

Ա.Մխոյան - գործարար

Լ.Անթառանյան - Վանաձորի Ստ.Զորյանի անվան տուն-թանգարանի տնօրեն, գրողների միության քարտուղար /համաձայնությամբ/

Մասնակցում են նաև հրավիրված անձինք և ՁԼՄ – ների ներկայացուցիչներ:

Օրակարգում՝

1. ՀՀ Լոռու մարզում Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների անցկացման մասին (Ա. Նալբանդյան):

2. ՀՀ Լոռու մարզում Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների նախատեսումների, ժամանակացույցի, կատարման պատասխանատուների մասին (Մ.Սայադյան):

Օրակարգի 1-ին հարցով ելույթ ունեցավ ՀՀ Լոռու մարզում Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող հանձնաժողովի նախագահ, ՀՀ Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանը:

Ա. Նալբանդյանը տեղեկացրեց, որ ծրագիրը կազմելիս հաշվի են առնվել մարզի համայնքներից, ուսումնական հաստատություններից և մշակույթի օջախներից ստացված բոլոր առաջարկությունները և հնարավոր ամեն ինչ պետք է արվի հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը պատշաճ մակարդակով կազմակերպելու համար: Նա ընդգծեց ներկաների կողմից միջոցառումների ծրագիրը ամենայն պատասխանատվությամբ քննարկելու կարևորությունը: Օրակարգի 2-րդ հարցով ելույթ ունեցավ և միջոցառումների ծրագրի նախագիծը ներկայացրեց հանձնաժողովի անդամ, Լոռու մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մինաս Սայադյանը:

Նրա տեղեկացմամբ, սկսած մարտ ամսից մինչև ապրիլի 24-ը տեղի կունենան բազմաթիվ միջոցառումներ: Մարզի դպրոցների 9-12-րդ դասարաններում կկազմակերպվեն շարադրությունների մրցույթներ, թեմատիկ ֆիլմերի ցուցադրություններ, գրական-երաժշտական ցերեկույթներ, թատերականացված բեմադրություններ, նկարչական, ասմունքի մրցույթներ, բաց դասեր, դասախոսություններ: Մարզի քաղաքներում ապրիլի 23-ին կկազմակերպվեն ջահերով քայլերթեր դեպի տեղի եկեղեցիներ: Վանաձորում, Ստեփանավանում և Ալավերդում հանդիսատեսին կներկայացվի Է. Հիլզենհարթի «Վերջին մտքի հեքիաթը» ներկայացումը՝ հայոց եղեռնի թեմայով: Ոգեկոչման համերգներ տեղի կունենան մարզի քաղաքային համայնքներում, գրական միջոցառումներ՝ Վանաձորի գրադարանների կենտրոնացված համակարգում, Ստեփան Զորյանի տուն-թանգարանում, թեմատիկ

ցուցահանդեսներ՝ գեղարվեստի դպրոցում, կերպարվեստի թանգարանում: Վանաձորում կկազմակերպվեն նաև վավերագրական ֆիլմերի դիտումներ, դասախոսություններ՝ Լոռի-Փամբակի երկրագիտական թանգարանում, Վանաձորի պետական համալսարանում: ՎՊՀ-ում տեղի կունենան նաև գիտաժողովներ և գիտական ընթերցումներ: Վանաձորում, Սպիտակ, Ալավերդի և Ստեփանավան քաղաքներում մի շարք միջոցառումներ տեղի կունենան նաև Հայաստանում Ֆրանկոֆոնիայի երկամսյակի շրջանակներում: Նշյալ, ինչպես նաև Տաշիր, Թումանյան, Շամլուղ, Օձուն, Դսեղ, Մարզահովիտ, Շահումյան համայնքներում տեղի կունենան հայոց մեծ եղեռնի 100-րդ տարելիցին նվիրված բազմաբնույթ միջոցառումներ:

Օրակարգի երկրորդ հարցի առթիվ ելույթներ ունեցան և առաջարկություններով հանդես եկան Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ արքեպիսկոպոս Չուլջյանը, Լոռու փոխմարզպետներ Արսեն Դարբինյանը, Վանիկ Ասատրյանը, Տիգրան Բադոյանը, մարզպետի խորհրդական Լևոն Ասլանյանը, Վանաձորի քաղաքապետ Սամվել Դարբինյանը, ՎՊՀ ռեկտոր Գուրգեն Խաչատրյանը, պատմաբան Յուրա Ղուլյանը և ուրիշներ: Մարզպետ Արթուր Նալբանդյանը հանձնարարեց, որ հնչած բոլոր դիտարկումներն ու առաջարկությունները հաշվի առնվեն, և հաջորդ նիստին ներկայացվի ծրագրի լրամշակված տարբերակը:

ՀՀ Լոռու մարզպետ,
հանձնաժողովի նախագահ



Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ